

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 03-Ի ՆԻՍՏԻ

ք. Երևան

«03» սեպտեմբերի 2024թ.

2024 թվականի սեպտեմբերի 03-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցավ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ ՀԽ) նիստ:

Նիստի օրակարգը նախապես ներկայացվել էր Հոգաբարձուների խորհրդի անդամներին «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի ընտրություն.

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ընթացիկ աշխատանքների վերաբերյալ զեկույց:

Նիստին մասնակցել են՝

Գ. Սանոսյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀԽ նախագահ

Ս. Թովմասյան ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ

Ա. Հովհաննիսյան ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

Ա. Ադիլխանյան ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, ՀԽ անդամ

Ք. Ղալեչյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ

Ա. Ավանեսյան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

Ն. Տերյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

Գ. Խաչատրյան ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար, ՀԽ անդամ

Ա. Զոհրաբյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ

Քվեարկությանը չի մասնակցել՝

Ե. Վարդանյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ

ՀՀ ՏԿԵ նախարար, ՀԽ նախագահ Գ. Սանոսյանը ողջունեց նիստի մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց Հիմնադրամի նախկին գործադիր տնօրեն Գ Ավետիսյանին՝ պատասխանատու և սրտացավ աշխատանքի համար, ինչպես նաև՝ Հիմնադրամի գործադիր տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Պետրոսյանին՝ իր վրա դրված պարտականությունները պատշաճ իրականացնելու համար:

Անցնելով օրակարգի 1-ին հարցին՝ Գ. Սանոսյանը Հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնում ներկայացրեց ՏԿԵ նախարարի խորհրդական Ա. Զոհրաբյանի թեկնածությունը:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ 8 կողմ, 0 դեմ:

Քվեարկությունը համարվում է կայացած:

Հաշվի առնելով, որ Ա. Զոհրաբյանը հանդիսանում է ՀԽ անդամ և քվեարկությունը վերաբերում էր իր թեկնածությանը, վերջինս քվեարկությանը չի մասնակցել:

Անցնելով Օրակարգի 2-րդ հարցին՝ Գ. Սանոսյանը խոսքը փոխանցեց ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ Ք. Ղալեյանին: Վերջինս ներկայացրեց Հիմնադրամի ընթացիկ աշխատանքները և մոտակա հեռանկարները:

Նիստի արդյունքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն ընտրել Ա. Զոհրաբյանին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Գ. Սանոսյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝

Ա. Հայրապետյան